

նստին ի յաթոռ հօրն մերոյ Ս. Լուսաւորչին»<sup>3</sup> : Առաքել կաթողիկոսի համար 1590ին կ'ըսուի թէ էր «ճգնազգեաց եւ խարազնագգեստ հեղահոգի»<sup>4</sup> : Գրիգոր 1587էն ետքը չի յիշուիր այլ եւս : Իսկ Առաքել վերջին անգամ կը յիշուի 1593ին : Կ'երեւայ թէ Գրիգորի մահէն ետքը աթոռակցութեան կանչուած է Մելքիսեդեկ. ասիկա իր մէկ կոնդակին մէջ, արուած Մաղարդայ Ս. Ստեփաննոս վանքին Ռ.Լ.Ը. Թուին, նոյն 1589 տարին իւր կաթողիկոսութեան առաջին տարին կը նշանակէ<sup>5</sup> : Մելքիսեդեկ կը յիշուի 1591ին ի Վարազ գրուած ձեռագրի մէջ<sup>6</sup>. զարձեալ 1594ին եւ այնուհետեւ յաճախ :

1595ին Յակոբ եպիսկոպոս ի վանս Առնջից կը գրէ<sup>7</sup>. Գրեցաւ «ի հայրապետութեան տեանն՝ զո՞րս ասացից, բազումք կոչեցեալ կան ի աքոռ սուրբ Էջմիածնի Վաղարշապատու» : Կ'ականարկէ Դաւիթ, Մելքիսեդեկ եւ հաւանօրէն Աւետիս կաթողիկոսները : Վերջինս կ'երեւայ թէ Առաքելի յաջորդ եղած է. առաջին անգամ կը յիշէ ինք զինք 1601ին :

Ի սկզբան կարելոր տեսնուած էր աթոռակիցներու պէտքը, այն յուսով թէ երեքի ձեռն ի ձեռն գործակցութեամբ հնարաւոր պիտի ըլլայ ժամանակի ծանր դրութեան ա-

<sup>3</sup> Արարատ, 1905, էջ 723 :

<sup>4</sup> Աւետարան Առաքելոց վանքի ի Մուշ :

<sup>5</sup> Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 683, թղ. 10ա :

<sup>6</sup> Մմբատեանց, Երնջակ, 261 :

<sup>7</sup> Սարգիսեան, Տուրքալ, Ա., էջ 694 :